Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման
Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ ՀՀ ԿԳՄՍՆ

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ ՎՈ 965-Ա

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝

Ժաննա Անդրեասյան՝ նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ Վրաստան /Թբիլիսի/

5. Գործուղման ժամկետները՝ 2026 թվականի հոկտեմբերի 7-ին

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☑ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Ժաննա Անդրեասյան			Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը	Էկոնոմ			
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	***39494***			**39.494**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (եվրո)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				-
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				-
	Վճարը 1 օրվա համար (եվրո)				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				0
	Օրերի քանակը				
	Ընդամենը (դրամ)				-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	74			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	26774			**26.774**
	Օրերի քանակը	1			
	Ընդամենը (դրամ)	***26774***			**26.774**
Այլ ծախսեր	Հակահամաճարակայինոմուշառումների				
	Այլ ծախսեր (մուտքի արտոնագրի վճար)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		***66.268***	-	-	***66.268***

Ծանոթություն : Նախնական վճարվել է 26774 ՀՀ դրամ, ենթակա է վճարման 39494 ՀՀ դրամ:

Արտարժույթի միջին փոխարժեքն առ 05.10.2026թ.
1 դոլար= 361.81 դրամ

ԿԳՄՍՆ գլխավոր քարտուղար՝ **ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը զբաղեցված պաշտոնը

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյան

2. Գործուղման վայրը և ժամկետները

Վրաստան (Թբիլիսի)
2026 թվականի հոկտեմբերի 7

3. Հրավիրող կողմը

-

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Երկկողմ հանդիպումների ձևաչափով քննարկել կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառներում Վրաստանի հետ համագործակցության զարգացման հեռանկարային հնարավորությունները:

5. Քննարկված թեմաները

- Երկու երկրների ազգային թանգարաններում համատեղ ցուցահանդեսներ կազմակերպելը:
- Ժամանակակից արվեստի և կինոյի ոլորտներում համագործակցության զարգացումն ու համատեղ ծրագրերի իրականացումը:
- Երկու երկրների միջև կրթական և գիտական ոլորտներում համագործակցության ընդլայնումը և փորձի փոխանակումը:
- Սպորտի ոլորտում Հայաստանի և Վրաստանի միջև համագործակցության շարունակականությունն ու փոխգործակցության ընդլայնումը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատանքային այցի շրջանակում հանդիպել եմ Վրաստանի մշակույթի նախարար Մայա Բիտաձեի հետ:

Հանդիպմանը մասնակցել են նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը և Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Գեորգի Շարվաշիձեն:

Շնորհակալություն եմ հայտնել ջերմ ընդունելության, ինչպես նաև Վրաստանում Հայաստանի մշակույթի օրերի կազմակերպմանն աջակցելու համար: Գործընկերոջս հետ հանդիպմանն ընդգծել ենք Հայաստանի և Վրաստանի միջև մշակույթի ոլորտում համագործակցության հետագա ընդլայնման, ինչպես նաև մշակութային ժառանգության պահպանության և հանրահռչակման կարևորությունը:

Կարևորել եմ նաև Վրաստանում՝ Հայաստանի մշակույթի օրերի շրջանակում Վրաստանի ազգային թանգարանի Դիմիտրի Շևարդնաձեի անվան ազգային պատկերասրահում «Երվանդ Քոչար. բազմաչափ հանճարը» (Թիֆլիս-Փարիզ-Երևան) խորագրով կոնցեպտուալ հետահայաց ցուցահանդեսի (այսուհետ՝ Ցուցահանդես) բացումը:

Անդրադառնալով թանգարանային ոլորտում համագործակցության ընդլայնմանը՝ կարևորել եմ երկու երկրների ազգային թանգարանների միջև կապերի ամրապնդումն ու համագործակցության խթանումը՝ առաջարկելով կազմակերպել համատեղ ցուցահանդեսներ:

Կարևորել ենք նաև ժամանակակից արվեստի և կինոյի ոլորտներում համագործակցության զարգացումն ու համատեղ ծրագրերի իրականացումը և վերահաստատել մշակույթի ոլորտում սերտ համագործակցությունը շարունակելու և համատեղ նախաձեռնություններ իրականացնելու պատրաստակամությունը: Այնուհետև՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի հետ՝ Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանի ուղեկցությամբ այցելել ենք Թբիլիսիի հայ գրողների և հասարակական գործիչների Խոջիվանք պանթեոն և հարգանքի տուրք մատուցել այնտեղ ամփոփված հայ մեծերի հիշատակին:

Այնուհետև՝ Թբիլիսիում՝ իմ գլխավորած պատվիրակության կազմում ընդգրկված ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի հետ՝ հանդիպել եմ Վրաստանի կրթության, գիտության և երիտասարդության նախարար Գիվի Միքանաձեի հետ:

Քննարկել ենք երկու երկրների միջև կրթության և գիտության ոլորտներում համագործակցության ընդլայնման, փորձի փոխանակման, ինչպես նաև համատեղ նախաձեռնությունների և միջոցառումների իրականացմանն առնչվող հարցեր:

Հանդիպման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել երկու երկրներում հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտներում իրականացվող բարեփոխումներին: Անդրադարձել ենք դպրոցաշինության ծրագրերին, ինչպես նաև կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված աշխատանքներին առնչվող մի շարք այլ հարցերի:

Առանձնակի կարևորել ենք Հայաստանի և Վրաստանի երիտասարդների մասնակցությամբ հավաքների և ճամբարների պարբերաբար կազմակերպումը՝ դրանք դիտարկելով որպես երկու ժողովուրդների միջև կապերի ամրապնդման և երիտասարդների շփումների խթանման կարևոր հարթակ:

Պատրաստակամություն ենք հայտնել շարունակելու սերտ համագործակցությունը կրթության, գիտության և երիտասարդության ոլորտներում և պայմանավորվել՝ քննարկել հետագա համատեղ ծրագրերը:

Հանդիպել եմ նաև Վրաստանի սպորտի նախարար Շալվա Գոգոլաձեի հետ:

Քննարկել ենք սպորտի ոլորտում Հայաստանի և Վրաստանի միջև համագործակցության շարունակականությունն ու փոխգործակցության ընդլայնման հնարավորությունները՝ մասնավորապես համատեղ մարզական հավաքների, ինչպես նաև տարածաշրջանային և միջազգային խոշոր մարզական միջոցառումների կազմակերպումը:

Շալվա Գոգոլաձեն նշել է, որ Հայաստանից հրավեր է ստացել մասնակցելու 2027 թ. կայանալիք Ֆրանկոֆոնիայի 10-րդ միջազգային մարզամշակութային խաղերին և պատրաստակամություն է հայտնել քննարկելու Վրաստանի մասնակցության հետ կապված հարցերը:

Ընդգծել եմ, որ Հայաստանը կարևորում է Վրաստանի մասնակցությունը Ֆրանկոֆոնիայի խաղերին՝ նշելով, որ նմանօրինակ միջոցառումները կարևոր հարթակ են ինչպես մարզական համագործակցության զարգացման, այնպես էլ երկու երկրների

երիտասարդների միջև կապերի ամրապնդման և բարեկամական հարաբերությունների ընդլայնման համար:

Կարևորել ենք նաև Ֆուտբոլի մինչև 20 տարեկանների 2029 թվականի աշխարհի առաջնության համատեղ հյուրընկալումը՝ ընդգծելով, որ այն Հայաստանի և Վրաստանի համար ոչ միայն խոշոր մարզական իրադարձություն է, այլև համագործակցության խթանման, փորձի փոխանակման և տարածաշրջանային գործընկերության ամրապնդման կարևոր հնարավորություն:

Հանդիպման ավարտին հանդես ենք եկել համատեղ մամուլի ասուլիսով:

Ներկա եմ գտնվել Վրաստանի ազգային թանգարանի Դիմիտրի Շևարդնաձեի անվան ազգային պատկերասրահում բացված Ցուցահանդեսին, որն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության անկախության 35-ամյակի շրջանակում, ինչպես նաև Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանության հովանու ներքո: Ցուցահանդեսը գործելու է 2026 թվականի հոկտեմբերի 8-ից նոյեմբերի 8-ը:

Նշեմ, որ Ցուցահանդեսի բացման նախօրեին ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի հետ՝ Վրաստանի մշակույթի նախարարի տեղակալ Նաթիա Շամաթավայի ուղեկցությամբ այցելել ենք Վրաստանի ազգային պատկերասրահ, ծանոթացել Ցուցահանդեսի նախապատրաստման աշխատանքներին, ձևավորմանը և ներկայացվելիք ստեղծագործություններին: Հաջողություն եմ մաղթել թանգարանի տնօրեն Կարինե Քոչարին և Ցուցահանդեսի ստեղծագործական ու կազմակերպչական թիմին:

Ցուցադրության հայեցակարգային առանցքն է կազմում Երվանդ Քոչարի նորարարական «Տարածական նկարչությունը»: Նախագծում ներառված են նաև ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ, ինստալյացիաներ և այլ մեդիաներ, որոնք ընդգծում են մաեստրոյի ապագամետ մտածողության կենդանի շարունակականությունն ու ներուժը:

Ցուցահանդեսի բացմանը զուգահեռ կներկայացվի նաև «Երվանդ Քոչար. բազմաչափ հանճարը» եռալեզու (հայերեն, վրացերեն, անգլերեն) նոր պատկերագիրք-կատալոգը (հեղինակ՝ Կարինե Քոչար): Հրատարակությունն ընդգրկում է վերջին տարիների արժեքավոր արխիվային բացահայտումներն ու նորահայտ փաստագրական տվյալները:

Միջոցառումն իրականացվում է Վրաստանում Հայաստանի մշակույթի օրերի շրջանակում՝ «Երվանդ Քոչարի թանգարան» ՊՈԱԿ-ի, Հայաստանի ազգային պատկերասրահի, Նորարար փորձառական արվեստի կենտրոնի (ՆՓԱԿ) և Վրաստանի ազգային թանգարանի միջև ձևավորված համագործակցությամբ:

Այցն եզրափակվել է Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի գալա համերգով, որը տեղի է ունեցել Թբիլիսիի Զաքարիա Փալիաշվիլու անվան օպերայի և բալետի պետական թատրոնում: Ծրագիրը նվիրված է Հայաստանի Հանրապետության անկախության 35-ամյակին:

Շնորհավորելով Վրաստանում Հայաստանի մշակույթի օրերի մեկնարկի կապակցությամբ՝ նշել եմ, որ Հայաստանի և Վրաստանի բարեկամության դարերի պատմությունը հիմնված է ոչ միայն ընդհանուր տարածաշրջանի, հարևանության ու պատմական առնչությունների, այլև մարդկային ամուր կապերի, փոխադարձ հարգանքի և մշակութային հարուստ երկխոսության վրա:

Ասել եմ, որ այս տարի Հայաստանի Հանրապետությունը նշում է իր անկախության 35-ամյակը: Պահպանելով ինքնության ու մշակութային ժառանգության հարուստ ավանդույթները՝ մեր պետությունը շարունակել է զարգանալ և ներկայանալ աշխարհին իր մշակույթի բազմազանությամբ ու ստեղծագործական ներուժով: Անցած տասնամյակները կարևոր ժամանակահատված են եղել մեր երկու պետությունների հարաբերությունների զարգացման և փոխադարձ համագործակցության ամրապնդման համար: Այսօր ռազմավարական գործընկերության մակարդակի բարձրացված այդ հարաբերություններն ընդգրկում են բազմաթիվ ոլորտներ, իսկ մշակույթն իր առանձնահատուկ տեղն ունի այդ համագործակցության մեջ՝ ստեղծելով մարդկանց, հասարակությունների և ստեղծագործական համայնքների միջև անմիջական շփման ու փոխադարձ ճանաչման հնարավորություններ: Հայաստանի մշակույթի օրերի անցկացումը Վրաստանում հրաշալի առիթ է՝ ներկայացնելու ժամանակակից Հայաստանի մշակութային դիմագիծը, մեր ավանդական և ժամանակակից արվեստը, մեր ժառանգությունն ու այն ստեղծագործական ներուժը, որով այսօր ապրում և զարգանում է հայկական մշակույթը: Ելույթից հետո շնորհակալություն եմ հայտնել Վրաստանի մշակույթի նախարարությանը, Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը և մյուս գործընկերներին՝ միջոցառման կազմակերպման համար:

Միջոցառմանն ողջույնի խոսքով հանդես են եկել Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը և Վրաստանի մշակույթի նախարարի տեղակալ Նաթիա Շամաթավան:

Համերգային ծրագրում Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ և թավջութակահար Նարեկ Հախնազարյանի մասնակցությամբ, ներկայացրել է Արամ Խաչատրյանի, Զաքարիա Փալիաշվիլիի և Անտոնին Դվորժակի ստեղծագործությունները:

Միջոցառմանը ներկա են եղել նաև Վրաստանի խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ Գիորգի Վոլսկին, նախարարության ներկայացուցիչներ, Հայաստանի պատվիրակության անդամներ, հայ համայնքի ներկայացուցիչներ և հրավիրված հյուրեր:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

-

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Այցերի ընթացքում երկուստեք առաջարկվել է դիտարկել համատեղ նախագծերի իրականացման հնարավորությունները մշակույթի, կրթության, գիտության, սպորտի և երիտասարդության ոլորտներում, ինչպես նաև փորձի փոխանակման ծրագրեր նախաձեռնելու ուղիները:

9. Ստորագրություն, ամսաթիվ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարար

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ 13.10.2026 թ.

Recoverable Signature

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169